

Գտնել ու թուել քրդական ցեղերու ամբողջ անուաններն ու ստորաբաժանումները շատ դժուար է, ինչպէս և ցեղի ու ստորաբաժանման մեծութեան ու փոքրութեան չափը. նախ որ անոնք տեղ մը չը մնալով կը գաղթեն մի այլ տեղ, ու իրենց ցեղը հետեւին կը տանին. պատճառը այդ է, որ հիւսիս գտնուած ցեղը կը գտնուի և հարաւը ու ընդհակառակն. շատ անգամ ստորաբաժանումները իրենց ցեղային ընդհանուր անուան տակ գտնուած մէկ ցեղին մօտիկ մնալու համար կը փոխանակեն իրենց բնակութեան տեղերը. շատ անգամ ալ ցեղէն փախչելու համար՝ տեղ կը գտնեն թշնամի ցեղի մօտ, առանց ցեղականութիւնը ուրանալու կամ կորսնցնելու. այս պարագային թշնամի ցեղի հետ կը կապուին սնտեսապէս, մրցման մէջ մնալու համար իր բաժանուած մասի հետ :

Յեղի անունը (թէ ընդհանուր և թէ ստորաբաժանման համար) այնքան ժամանակ զօրաւոր ու հուշակաւոր կը դառնայ, որքան նա ուժեղ կը մնայ իր պատերազմիկ յատկուներկայացնեն, կը բնակի Վարտօ, Յանքե գաւառները և Խնուսի ու Բուլանքի մէջտեղ գտնուող Խամուր բերդ լեռան երկու կողմն ևս: Այս ցեղի մասն բաժանմունքները իրարու թշնամի են և շարունակ կը կրուին իրարու հետ:

Պըրբցիք. — Պըրբցիք մի փոքր ցեղ է և Մալա Ուլյ (Ուլյի տուն) կը կոչուի, Ջըզըրանցիներից բաժնուած մի ցեղ է, այժմ Համիտիէ են և կը բնակին Խնուսի մէջ:

Հասամանցիք. Այս ցեղը քիւրդերի հարուստ բազմամարդ ուժեղ ցեղերից մինն է, շատ մը բաժանումներ ունի, ինչպէս Բմըրեանք, Շուէշներ, Ֆարէզներ, Ասէաներ, Նոյնպէս Ֆիսիանցիք, Շէշխըքցիք և այլն: Ասոնք ևս Համիտիէ են և կը բնակին Մանազկերտ, Պուլանք, Խնուս, իրենց գլխաւորն է Մանազկերտի Ֆաթուլլահ պէյն.

Սիբրցիք. կը բնակին Այնթապ, Կըլիէ, Բարազան և այլն, ասոնք Համիտիէ են, մեծագոյն մասը անասնապահութեամբ կ'ապրի և մի մասը երկրագործութեամբ:

Ճէլալցիք. Այս ցեղն ալ նախորդ ցեղին հետ խառն կը բնակի, կը գտնուի նաև Ալաշկերտի մէջ, ասոնք ևս Համիտիէ են:

Ձիլանցիք. Գիւրդերու մեծագոյն ցեղերից մին, որոնք կը բնակին Ալաշկերտ, Պայաղիտ, մինչ Պարսկական սահմանները, որոնց գլխաւորն է Սէլիմ փաշան և Համիտիէ են: